«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

18 նոյեմբերի, 2025 թ. N 28-L

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) անդամակցության հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության անդամակցության հանձնաժողովի 2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **ՄԱՆՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ**

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2025թ. նոյեմբերի 18-ի N 28 - L որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

անդամակցության հանձնաժողովի

2026 թվականի գործունեության տարեկան ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) Անդամակցության հանձնաժողովի (այսուհետ՝ Անդամակցության հանձնաժողով) 2026թ. գործունեության ծրագիրը կազմվել է ի կատարումն Անդամակցության հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Անդամակցության հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սույն գործունեության ծրագրի հիմքում դրված են Անդամակցության հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական, այնպես էլ այլ գործառույթները.

Հիմնական գործառույթներ.

- Պալատին անդամակցության գործընթացի կազմակերպում,
- Պալատի անդամների կողմից շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) պահանջների պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպում,
- Պալատի խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարում:

Այլ գործառույթներ.

- Համագործակցություն Պալատի մյուս հանձնաժողովների հետ,
- Օժանդակություն Պալատի անձնակազմին,
- Համագործակցություն պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև արտերկրի համանման կառույցների հետ:

Գործունեության 2026թ. ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և նրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից և դրա իրականացման նկատմամբ սահմանված պահանջներից, այսպես.

Պալատին անդամակցության կազմակերպման գործառույթի գծով աշխատանքների պլանավորման համար հաշվի են առնվել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Անդամակցության կարգի 3.1.4 կետով սահմանված ժամկետները,

Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից ՇՄԶ պահանջների պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպման գործառույթի գծով աշխատանքների պլանավորման համար հաշվի են առնվել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության աուդիտոր և փորձագետ հաշվապահ անդամների շարունակական

մասնագիտական զարգացման կարգի պահանջները և Պալատի անդամների ներկա թիվը,

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Պալատին անդամակցության գործընթացի կազմակերպում	Պալատին անդամակցության համար դիմած կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ Պալատի Կանոնադրությանը, «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի և Անդամակցության կարգի պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն (նախնական փորձաքննություն)	Պարբերաբար՝ դիմումի ստացումից հետո 10 օրյա ժամկետում
		Հանձնաժողովի նիստի գումարում՝ կատարված ուսումնասիրության արդյունքների քննարկում և դրանց հիման վրա Պալատի խորհրդին Պալատին անդամակցելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում	Պարբերաբար՝ դիմումի ստացումից հետո 14 օրյա ժամկետում
2	Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից ՇՄԶ պահանջների պահպանման նկատմամբ հսկողության կազմակերպում	Պալատի գործադիր մարմնից ստացված նյութերի հիման վրա Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների կողմից Պալատին ներկայացված ՇՄԶ հաշվետվությունների առնվազն 28%-ի ընտրանքային ուսումնասիրություններ	Մարտ-նոյեմբեր
		Հանձնաժողովի նիստերի գումարում՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքների քննարկում և դրանց ներկայացում Պալատի խորհրդին, համապատասխան հանձնաժողովներին և գործադիր մարմնին	Մարտ-նոյեմբեր

3	Պալատի անդամներին ՇՄՋ կարգի պահանջների վերաբերյալ իրազեկման բարձրացում	Պալատի գործադիր մարմնի հետ համագործակցելով տարեկան առնվազն երկու անգամ դասընթացի ձևաչափով ՇՄՋ կարգի պահանջների և հայտարարագրի լրացման առանձնահատկությունների ներկայացում	Յուրաքանչյուր կիսամյակ առնվազն մեկ անգամ
4	Պալատի Խորհրդի հանձնարարական-ների կատարում	Միջոցառումներն՝ ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր
5	Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ	Միջոցառումներն՝ ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր
6	Հաշվետվություններ	Հանձնաժողովի 2025թ. գործունեության մասին հաշվետվութան ներկայացում Պալատի խորհրդին	Մինչև 2026թ. մարտի 31
7	Պալատի անդամների հետ ինտերակտիվ կապի խողովակների ստեղծում	«Անդամների ձայնը » հանդիպումների շարքի ստեղծում • 90 րոպեանոց բաց քննարկումներ, որտեղ անդամները բարձրաձայնում են խնդիրներ և առաջարկներ, կրթության, որակի վերահսկման, կարգավորման և այլ հարցերի վերաբերյալ: • Արդյունքների ամփոփում և ներկայացում խորհրդի ամփոփ տեղեկանքի ձևաչափով	Տարեկան առնվազն մեկ անգամ

Անդամակցության հանձնաժողովի 2026թ. գործունեության ծրագրի իրականացման համար ֆինանսական ծախսեր չեն նախատեսվում:

Անդամակցության
հանձնաժողովի նախագահ՝ Աշոտ Բարսեղյան